



## Եվրոպական շարժման առաջնորդները Էրեբունիում. մենք հասկացանք, թե որտեղ է Նոյը որոշել իջնել

22.10.2011թ.

2011թ. հոկտեմբերի 20-21-ին Երևանում գումարված Եվրոպական շարժման միջազգային կոնգրեսի առաջնորդներ Փաթ Կոքսը և Շարլ Ֆերդինանտ Նոթոմբը, երեկ՝ հոկտեմբերի 21-ին, օրվա 2-րդ կեսին, կոնգրեսի աշխատանքների ավարտից հետո այցելել են Էրեբունի ամրոցի միջնաբերդ և թանգարան՝ ծանոթանալու Երևան մայրաքաղաքի բնօրրանին:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանի հետ նրանք շրջել են ամրոցի միջնաբերդում և հետաքրքրվել ուրարտական բերդաքաղաքի պատմության մանրամասներով, ինչպես նաև հետաքրքրությամբ դիտել են արգելոց-թանգարանի մշտական ցուցադրության մեջ ներկայացված պեղածո նյութերը՝ Էրեբունիից, Շենգավիթից և Կարմիր բլուրից: Եվրոպական շարժման առաջնորդները Հայաստանի եվրոպական ինտեգրման ճանապարհին կարևորել են պատմամշակութային ժառանգության պահպանության սկզբունքները և մոտեցումները, մասնավորապես նշել են քաղաքային միջավայրում հնագիտական ժառանգության ներկայացման բարդությունները:

Պատվավոր հյուրերը իրենց տպավորություններն են գրառել արգելոց-թանգարանի հուշամատյանում: Շարժման նախագահ Փաթ Կոքսը, ով ազգությամբ իռլանդացի է, հին իռլանդերեն գիրը նմանեցրել է ուրարտական սեպագրին և իր նախնիների լեզվով գրել է. «Անչափ տպավորված եմ այս այցելությունից»: Իսկ Բելգիայի պետական նախարար Շարլ Ֆերդինանտ Նոթոմբը թողել է հետևյալ գրառումը. «Փորձելով մեզ համար բացահայտել Երևանը՝ մենք հասկացանք՝ թե որտեղ է Նոյը որոշել իջնել»:

*«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան*